

Լոռու մարզպետ
պարոն Ա.Նալբանդյանին

Զ ե կ ու ց ա գ ի ր

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. նոյեմբերի 14-ի թիվ 1821-Ն որոշմամբ հաստատված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի <<դ>> ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N1013-Ն որոշման 5-րդ և 6-րդ կետերի պահանջների համաձայն՝ 2012թ. մայիսի 1-ի դրությամբ «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված «0» միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքներին որպես սոցիալական աջակցություն հատկացված արևածաղկի ձեթի բաշխման աշխատանքները կանոնակարգելու մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի հունիսի 27-ի N27-Ա/1 հրամանով կանոնակարգվում է ՀՀ կառավարության կողմից ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված «0» միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքներին /յուրաքանչյուրին՝ 3 շիշ/ որպես սոցիալական աջակցություն հատկացված արևածաղկի ձեթի բաշխման գործընթացը:

Լիովին ապահովվել են մարզի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների /ՄԾՏՏՄ-ներ/ կողմից գործընթացի լիարժեք մասնակցությունը և ԶԼՄ-ներով քնակչության իրազեկման աշխատանքները: Մարզի ՄԾՏՏՄ-ներն իրականացրել են բեռի բեռնաթափման և պահեստավորման աշխատանքները:

Խնդրում եմ թույլատրել վերքոշարադրյալ հայտարարությունը տեղադրել մարզպետարանի կայք-էջում:

Առողջապահության և սոցիալական ապահովության

վարչության պետ

Ս.Լամբարյան

Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 14-ի N1013-Ն որոշման համաձայն Լոռու մարզում իրականացվում է 2012թ. մայիսի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված «0» միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքներին որպես սոցիալական աջակցություն հատկացված արևածաղկի ձեթի բաշխման աշխատանքները՝ յուրաքանչյուր ընտանիքին 3-ական շիշ չափաքանակով: Որպես սոցիալական աջակցություն հատկացված արևածաղկի ձեթի բաշխումը կտևի մինչև 2012թ. օգոստոսի 20-ը ներառյալ:

Քաղաքացիները իրենց հետաքրքրող հարցերով, ինչպես նաև աջարկությունների համար կարող են դիմել Լոռու մարզպետարան /առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն՝ հեռ. 0322 2-33-99/, իսկ տարածաշրջաններում՝ սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններ /Վանաձորում՝ բաժին/:

Շահառուները օգնություն ստանալու համար պետք է ներկայացնեն ընտանիքի սոցիալական անձնագիրը, օգնություն ստացող ընտանիքի անդամը՝ անձնագիրը:

Լոռու մարզպետարան